

# ՄԱՏՆԵԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԵԱՑ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎՐԱՑ

(Տես Հատ. ԽԲ, էջ 312):

### ԳԼՈՒԽ ԺԷ

Թագաւորն Գեորգեայ 'ի վերայ Ափսազաց և յաղագս գործոց և պայազատաց նորին. — Յաղագս քաղաւորութեան Բագրատայ՝ որդւոյ Գուրգենայ. — Պատերազմ Գեորգեայ՝ որդւոյ Բագրատայ ընդ վաւի կայսր, և յաղագս Պետրոսի Գետադարձի. — Յաղագս քաղաւորութեան Բագրատայ՝ որդւոյ Գեորգեայ, և մահուանն ի պարտի, և որ ինչ անցք անցին յաւերս նորա. — Արշաւանք Արփայականայ 'ի Հայս և 'ի Վիրս, և Բագրատայ պատերազմ ընդ Փատուսն ամիրայի. — Թագաւորն Գեորգեայ՝ որդւոյ Բագրատայ, և հաստատել զայն խաղաղութեան ընդ Միլիք Շահի:

Յայնմ ժամանակի մեռաւ Թագաւորն Ափսազաց կոստանդին՝ թողեալ երկուս որդիս՝ զԳորգի և զԲագրատ, որ կուռէին 'ի վերայ Թագաւորութեան՝ մինչև մեռաւ Բագրատ: Եւ Թագաւորեաց Գեորգի, այր բարի և շինող եկեղեցեաց: Մեռաւ քորեպիս կոպոսն կորիկէ, և էառ զտեղի նորա փաթլ՝ որդի նորա, որ շինեաց զբերդն

Ղոծորան: Յաւուրսն Գեորգայ՝ եկն Սալոր ամիրայն, և այրեաց զՄցխեթա, և գերեաց զխաչն Նուենայ՝ կոռորատեալ. և եղև 'ի նոսա ախտ սեմրորի՝ և գիտացին թէ 'ի խաչէն է պատուհասն. և ժողովեալ զհատեալ մասունն և լցին յամանս, և կանգնեցին 'ի տեղով իւրում: Եւ Թագաւորն Ափսազաց ետ զԲարթի՝ կոստանդին՝ որդւոյ իւրոյ. որ և զկնի երից ամաց ապստամբեալ՝ մտաւ յովսիլացիիս. որ և խաբէութեամբ հանեալ արտաքս՝ սպանին: Եւ զփառլ փոխեաց կիրիկէ քորեպիսկոպոսն, և զԳորգի Թագաւորն՝ լեւոն որդի իւր: Յայնմ ժամանակի իշխանիկն էր Թաղաւոր 'ի կողմանս Հերթոյ, և ունէր հերձուած, և մայր իւր դարձոյց յուղղափառութիւն: Չկնի լեւոնի Թագաւորեաց Դեմետրէ որդի՝ նորա: Եւ եկն եղբայր նորա Թէոդոս 'ի Հռոմայ, և վիճէին վասն հայրենեացն. և ապա հաշտեալ երգուան միմեանց: Եւ ստեաց Դեմետրէ, և խաբեաց զաչքն եղբորն. բայց

զիւր՝ առանց յայտնելոյ թէ Թագաւորեալ էցէ եթէ ոչ. վասն որոյ և մեր զանց զնովա արարեալ զՍմբատ — կիւրապաղատ՝ ըստ Վախուշտի կարգեմք յիսնեքորդ 'ի շարս արքայից և զԲագրատ — Ամիտ՝ զվերջինն 'ի բուն Բագրատունեայ՝ յիսնեքորդ առաջնեքորդ. քանզի Սմբատ որդի վերջնոյ այսր Բագրատայ՝ մեռաւ անորդի, յետ երկուց ամաց մեռանելոյ հօրն. որով մինչև Բագրատ Գ. որդի Գեորգեայ՝ անգրաւական Բագրատ — Ամիտ, իշխեցին 'ի վերայ Վրաց՝ Թագաւոր 'ի տոհմ Բագրատունի արքայից Ափսազաց, յորոյ առաջինն՝ կոստանդին, որդի Գեորգեայ Ափսազաց արքայի, որ իշխեաց զամս երես, 'ի 923 — 926:

3 Այն է՝ զի միտարնեալ ընդ Հայոց՝ հակաւ հառակէր ժողովոյն Բաղկեղունի:

4 Ըստ Վախուշտայ՝ նորայր նորա:

1 Այսպէս յորինակին. Թերեւս ախտս իմն փոքի, զի և Պրուէ ունի dysenterie, որ է ախտ քանկաց:

2 Յորինակին կիրիկի, որ է վրիպակ. ուղղեցաւ ըստ Վախուշտայ. — Աստուծո ըստ խառնակութեան պատմութեան Վրաց՝ ոչ սակաւ շփոթութեան և կարգի Թագաւորաց նոցա տեսանի. քանզի զկնի անգոր իշխանութեան Ա. զըրեաս Բի, արքայն Ափսազաց Գեորգի՝ կարգէ զորդի իւր զկոստանդին Թագաւոր 'ի Վիրս, յորմէ և անգոր խառնաշփոթ յաճորդութեամբ ձգի մինչև Գրագրատ Գ. և անց յայնմ միջոց ժամանակի երեք իշխանք մեծարին 'ի ժամանակս կարգաց արքայական կոյմամբ, որք են Գաւրթ — կիւրապաղատ և Սմբատ — կիւրապաղատ որդիք Ագրեան Բի, և Բագրատ — Գաւրթ՝ կոչեցեալն Ամիտ. յերեցունցս յայտցանէ զառաջնոյն զանունն եթէ և զմահն ծանուցանեն ժամանակաւ:

զկնի մահուան նորա զթէոդոս եղին յաթոռն:

Եւ Դաւիթ կիրապաղատն՝ թագաւոր Տայոյ՝ սնուցանէր զմանուկն Բագրատ<sup>1</sup> զորդին Գուրգենայ. և խնդրեցին զնա թագաւոր Ափխազեթոյ: Եւ Ռատն<sup>2</sup> էր 'ի Կարս, և ունէր զերբոյն Ատենոյ և զհարաւակողմն կուր գետոյ. սա ոչ հնազանդէր Բագրատայ. և Գուրգեն Տայր նորա եկն առ որդին, և կամեցան գնալ 'ի վերայ Ռատին: Եւ քսեցին առ Դաւիթ կիրապաղատն՝ եթէ զզլուի քո խնդրեն. և հաւատաց բանիցն, և ձեռնատուութեամբ Հայոյ՝ փախոյց զդօրսն: Եւ Բագրատ գնաց միայն, և անկաւ յոտս նորա, և երդուաւ՝ եթէ 'ի վերայ Ռատին երթալ յաք. և յայնմ և հաւատաց, և արձակեաց զնա հայտութեամբ: Եւ գնաց 'ի յԱփխազեթ. և 'ի ձմերային յեղանակին դարձաւ 'ի վերայ կլտէկարուց՝ հնազանդել զՌատն. և եւ ընդ առաջ նորա (Ռատ), առեալ ընդ իւր զորդի իւր՝ զԼիպարիտն. և յանձնեաց (զկլտէկարս) նմա, և ինքն նստաւ 'ի հայրենիս իւր յԱրգուէթ: Յայնմ ժամանակի զօրացաւ փառալուն՝ ամիրայն Գանձակայ, և հարկանէր զիշխանն Կախեթոյ և Հերեթոյ<sup>3</sup>. Եւ առաքեաց Բագրատ՝ թագաւոր Ափխազաց՝ առ Գագիկ՝ թագաւորն Հայոյ՝ երթալ ընդ նմա 'ի վերայ փառալայ ամիրային: Եւ չորսն երկրորսն 'ի Գանձակ, և աւարաբեալ ընդ հարկաւ՝ դարձան աւարաւ: Եւ յաշողեցաւ թագաւորութիւնն Բագրատայ, և շինեաց վանորայս և եկեղեցիս՝ ամա երեսուն և վեց. և վախճանեցաւ 'ի թաւին վրաց երկու հարիւր երեսուն և հինգ:

Եւ թագաւորեաց որդի նորա Գէորգի<sup>4</sup> ամաց վելոտասանից: Ի հինգերորդ ամի թագաւորութեան սորա՝ եկն վասիլ կայսրն. և ընդդէմ գնաց նորա 'ի գաւառն Բասենոյ: Եւ իբրեւ հտես եթէ բազումք են՝ դարձաւ անդրէն. և վասիլն գնաց զհետ նորա, և այրեաց ըզքաղաքն Ուխտեաց. և դարձաւ Գէորգի և կուռեցան. և անկան յերկուց կողմանց բազումք 'ի տեղունոյ՝ որ կոչի Շիրիւք. և սպանին զՌատն՝ որդի Լիպարտի, և զտուրսի: Բայց մեծ քաջութիւն եցոյց Գէորգի, և դարձոյց զվասիլն: Այլ հպարտացեալ վրաց սակաւ յաղթութեամբն՝ հետամուտ լինէին, և մաշէին 'ի սուր սուսերին Յունաց, Եւ երկիցս և երկոյս զրդուցին պատարագ մըն վիլք, և կորեան և կործանեցան, և երկիրն նոցա աւերեցաւ. քանզի եւ զեալ զվայն կենսատու առաջի՝ սրբութէր վասիլն՝ եթէ տաս ինձ, ասէ, կուրանալ առաջի թշնամեաց իմոց՝ ոչ ծառայեցից քեզ, պատճառք փրկութեան մերոյ և նշան յաղթութեան: Վասն որոյ յաղթաւորեալ Գորգի, և յամենայն կողմանց տարակուսեալ ետ պատանդ. զորդի իւր զԲագրատ՝ աւագ երից, և խոստացաւ ծառայել նմա: Եւ գնաց վասիլն 'ի Տրապիզոն. և կողեցեալ առ ինքն զմեծ կաթուղի. կոսն Հայոց զՊեարոս՝ 'ի սօնի յայտ, նութեանն, և օրհնեաց զյուրն առաջի նորա. և ետես կայսր մեծ սքանչելիս 'ի վերայ լրոյն, և գովեաց զհաւատս Հայոց, և գնաց 'ի կոստանդնուպօլիս<sup>5</sup>. Եւ զկնի երից ամաց՝ արձակեաց զտուրայն Բագրատ առ հայրն իւր: Եւ ըզկնի երկուց ամաց զալստեան որդւոյն՝ մեռաւ Գէորգի, թողլով երկուս որդիս՝

<sup>1</sup> Յիսնէրորդ երկրորդ արքայ, բագրատունի, իշխեաց զամս 34, 'ի 980—1014:

<sup>2</sup> Ռատս այս թուի լինել 'ի սերնդոց անտի Լիպարիտի, զորմէ բանք եղեն 'ի պատմէս 'ի վերջոյ ժԶ զլեւկարդի գրոցս:

<sup>3</sup> Ափխազեթ և Ղէրէթ ամբ ինչ յառաջ առ պատակեց հանել Բագրատայ՝ որդւոյ Գուրգենայ, զմի 'ի ձեռաց Դաւիթ՝ որդւոյ Կայրիկէ Բէ, և զմիսն 'ի ձեռաց Կայրիկէի, կարգեալ էր 'ի նոսրն մրախարս կամ նախարարս, յորոց երբեք երբեք չոխանայր փառուն կամ Մամլան

ամիրայն՝ յաւարի և յաւերի գնելով զաշխարհս սըն զայնտիկ: Այս պատերազմն ընդ մերս Դաւիթի և ընդ Փառաւուն կամ Մամլան ամիրայ՝ յիշատակի և առ պատմիս մեր, բայց ոչ նշոյնպէս և նիդակտեցութիւնն Բագրատայ:

<sup>4</sup> Յիսնէրորդ երրորդ արքայ, բագրատունի, իշխեաց զամս 13, 'ի 1014—1027:

<sup>5</sup> Այս անք Պետրոս Կաթուղիկոսի չիք 'ի պատմութեան վաթմանգայ, և աստանօր թուի 'ի Հայ թարգմանէն յաւելեալ:

զբազրատ և զԴեմետրէ, և երկուս զըստեբա:

Եւ էառ զթագաւորութիւնն Բազրատ <sup>1</sup>, և չոքաւ մայրն նորա Մարիամ <sup>2</sup>, ի հոստանդնուպօլիս, և երեւթողիմ զաշանց խաղաղութեան և պատիւ կիւրապաղատութեան՝ որդւոյ իւրոյ. և կին նմա էած յազգէ թագաւորացն Թունաց՝ Հեղինէ անուն. և պսակեցաւ նովաւ Բազրատ, և էառ միւս ևս կին՝ զԳորենա, զուստր թագաւորին Օսելոյ <sup>3</sup>. Եւ եղբայր նորա Դեմետրէ համահայր և ոչ համամայր, խորհեցաւ ի ձեռն իշխանաց ոմանց թագաւորել. և իբրեւ ոչ յաջողեցաւ. եւ ևս զնոց ի հոստանդնուպօլիս, ընդ իւր տարեալ զերկիրն Անակոփոլոյ, որ և մնաց առ նոսա մինչև ցայսօր ժամանակի. և տիրեաց Բազրատ ամենայն հայրենեաց իւրոյ. Եւ Աիպարիտ և Իււանէ զօրագլուխը՝ նպատար լինէին թագաւորութեանն: Սորա խորկանօք առին զՏփիսիս ի Զափար ամիրայէն, և դարձեալ խղճացին և թողին ի Զափար. բայց նա ոչ պահեաց զհնազանդութիւն թագաւորին Աիսաղաց: Եւ եկն թագաւորն նստաւ ի վերայ Տփիսեաց. նոյնպէս և թագաւորն Կախեթոյ՝ Գաղիկ, որդին Հոյոց արքայի: Եւ սովեցաւ քաղաքն, մինչև եղև լիտր մի միս իշոյ՝ հինգ հարիւր գրամ: Եւ առին զՏփիսիս, և անդրէն յամիրայն թողին, մինչև մեռաւ Զափար. և ապա եմուտ ի Տփիսիս թագաւորն Բազրատ, և էառ զամրոց բերդին: Սա չի նետոց զպարիսպն Ախալքաղաքի. և զի մայր նորա Մարիամ՝ դուստր էր Սեւեթերիմայ Հոյոց արքայի, ետուն ըզքաղաքն Անի՝ բնակիչք նորա՝ ի թագուհին Մարիամ: Իսկ Աիպարիտն մեծ

խորհրդակցութեամբ այլոց աղատաց, կոչեաց զԴեմետրէ ի Թունաց թագաւորեցուցանել զնա. և ոչ յաջողեցաւ. այլ անդրէն դարձաւ զօրքն Հոռոմոց, որք էին ընդ նմա: Եւ վասիլն հնազանդեցաւ թագաւորին Բազրատայի՝ ինն բերդաւ <sup>4</sup>, և մեծացաւ Բազրատ յոյժ: Սա ետ զթագաւորութիւն արքայութեան իւրոյ ի Գորդի՝ յորդին իւր. և չոքաւ ի հոստանդնուպօլիս առ Մոնոմախ կայսրն. և էր մեծարոյ առաջի նորա: Եւ յետ երկոց ամաց դարձոյց զնա կայսրն յերկիր իւր, և զաշնեցեալ զնա Գորանդուխտ քոյրն Բազրատայ: Եւ ընդ առաջ եղեն նմա ամենայն մեծամեծք, և արարին ուրախութիւն մեծ: Բայց կիւրապաղատն Աիպարիտ ունէր լիով զվերին աշխարհն, և ոչ էր հաճեալ ընդ թագաւորութիւնն Բազրատայ, թէ և անուցեալ էր զորդի նորա և թագաւորեցուցեալ. վասն որոյ դարան գործեալ նմա՝ կայաւ իշխանն Սուլա <sup>5</sup>, հանգերձ որդուփն իււանէիւ, և տարաւ առաջի Բազրատայ. ընդ որ մեծապէս խնդացեալ ետ Սուլայի զՅիսիսիւուար և զՕձրիսէ և պարգևս բազումս: Զարչարեալ զԱիպարիտն՝ առին զամրոցսն. և ազուցին նմա հանդերձ կրօնաւորի, և առաքեցին առ կայսր. որ և զկնի սակաւ ինչ ամաց՝ մեռաւ անդէն. և զգի նորա բարձեալ բերին ծառայքն, և թաղեցին զնա ի Կացիսէ՝ ի զերեզման հարց իւրոց. և զԻւանէ որդի նորա՝ արարին աէր Արգուելոյ միայն:

Եայնմ ժամանակի զօրանայր ոմն ի Թուրքաստանէ և սուլտանանայր, Դուլլուբաթ անուն, ի նուաղելն Սարակինոսաց. և տիրէր ազգաց և գաւառաց բազմաց: Եւ զնա փոխէր որդի

<sup>1</sup> Յիսնեբորգ չորրորդ արքայ, բազրատուհի, իշխեաց ամս 45. ի 1027 — 1072:

<sup>2</sup> Մարիամ այս էր ի սոհմէն Արծրունեաց, դուստր Սենեբերիմայ՝ զերջնայ թագաւորաց Վասպուրականի, և Թառն Գաղիկ Ա. որպէս յիշէ և յարձանագրին Մարմաշխու, յորում նուիրէ Մարիամ Տարուս զիւզ առ ուխտ է. 46 զեզոյն. (Տեղացր. Շիրակայ, էջ 149):

<sup>3</sup> Ասիինք՝ յետ մահուան Հեղինէայ, որ եւ

զէ ի Գուլթայիս, որպէս պատմէ Վոսիթանգ:

<sup>4</sup> Վասիթանգ ունի այսպէս. « Յետ այսորիկ վերստին զօրացաւ Բազրատ. և էլք բախտին անդդեցին նմա, զի Վեստն միացաւ ընդ նմա ինն բերդօք Անույ, բայց յԱրեւրդէն օ: »

<sup>5</sup> Մթին է իմաստ բանիցն: Կամիցի տանէ անուշտ զի իշխանին Սուլայ, որ էր նախարար Ալաշխան, զարան գործեալ կաւաւ զԱիպարիտ և զօրդի նորա զԻւանէ:

նորա Արքիման. և գայր առնոյր զա-  
մենայն տունն Գարթլայ, կոտորէր և  
գերբը. և խաղացեալ զնայր 'ի մոյրտ-  
քաղաքն Հայոց 'ի յԱնի, և առնոյր զնա,  
և ընոյր արեամբ կոտորելոցն: Եւ այլ ևս  
սպառնայր Վրաց աշխարհին, եթէ ոչ  
տացէ նմա Բագարատ՝ զգուստը քեռ-  
իւրոյ 'ի կնուծիւն. որ էր նա զուստը  
եղբոր կիւրիկէի<sup>1</sup> Հայոց արքայի. յոր-  
մէ խնդրէր Բագարատ աղաչանօք, և  
ոչ տայր զնա կիւրիկէ. մինչ գործեցին  
նմա որոգայթ վարագրակուր և Գամիւ-  
կէլ զօրագլուխըն Վրաց, և ըմբռնեցին  
զնա յանտառին ֆուխչոյ. և ազդ ա-  
րարին Բագրատայ. և զնաց առ նա,  
և էառ զաղջիկն և զՇամշոյտէ 'ի ձե-  
ռաց նորա, և ապա արձակեաց: Իսկ  
Սուլտանն զկնի երից ամաց դարձաւ 'ի  
վերայ Վրաց, և երից արեամբ զերկի-  
րէն, Եւ առեալ զՏիփխիս՝ ետ 'ի յամի-  
ւոյն Գանձակայ 'ի փատուրն. եւ Աս-  
խարթան՝ որդի Գագկայ, Թագաւո-  
րին Կախեթոյ՝ եկն առ նա, և չրջէր  
ընդ նմա՝ մինչ և զնաց Սուլտանն. Զկնի  
այնորիկ կամեցաւ Թագաւորն Բա-  
գրատ զնալ 'ի վերայ Տիփխեաց. և  
լուաւ փատուրն, և եկն 'ի վերայ նո-  
րա: Եւ առաքեաց զիւանէ որդի Լի-  
պարտին՝ ամենայն զօրքն Վրաց՝ ընդ  
առաջ նորա. և հարին զզօրն ամե-  
նայն. մինչ երկուտասան արամբ միայն  
փախեաւ մազապուր՝ ընդ ճանապարհ-  
հըն Ծիլկանայ. և զնաց և պատեաց  
առ զեանդերքն Արգադոյ. և ասէր դի-  
պելոցն՝ եթէ Հրեշտակ աւետեայ եմ  
փատուրոյ, զի հարան զօրքն Ափխազաց:  
Եւ ոմն ծանուցեալ զնա՝ ասէ. Դու իսկ  
ես սովորայն ամիրայն փատուրն, Եւ զո-  
չեաց ձայնիւ մեծաւ, և հնչեաց եր-  
կիրն, և ձայն տուեալ միմեանց՝ ըմբռ-  
նեցին զնա բնակիչք գաւառին, և տա-  
րան առ Բագրատ. և էառ 'ի նմանէ

զՏիփխիս և զԴագ և զՔոզինն՝ զոր ա-  
ռեալ էին Պարսք 'ի Հայոց և 'ի Վրաց, և  
դահեկանա ութհարիւր քառասուն և  
ութ, և զորդի նորա պատանդ, և ար-  
ձակեաց զնա:

Յետ այնորիկ մեռաւ Բագրատ բա-  
րի անուամբ. և էառ զԹագաւորու-  
թիւնն որդի նորա Գէորգի կիւրապա-  
ղատն<sup>2</sup>, որ իշխէր ընդ հօրն 'ի կնն-  
դանութեան նորա: Եւ ապստամբեաց  
'ի նմանէ Իւանէ՝ որդին Լիպարտի. և  
յինքն յանկուցեալ զպահապանս զը-  
ղեկին Գագայ՝ վաճառեաց զնա դար-  
ձեալ տեառն Գանձակայ, Յաւուրսն  
յայնոսիկ գայ Մէլիք Շահ Սուլտանն, և  
առնու զՇամշոյտէ, և աւար հարկանէ  
զտունն Գարթլայ, և դառնայ 'ի Գան-  
ձակ. և Թողեալ անդ ամիրայ զՍրա-  
հանգն՝ չոքաւ 'ի տեղի իւր. Զկնի ա-  
ւուրց եկան Սրահանգն 'ի վերայ Գէորգ-  
գայ, և յողթահարեալ՝ զնաց փախըս-  
տեկան 'ի Գանձակ. Եւ էառ Գէորգ 'ի  
Յունաց զամենայն բերդան՝ զոր առեալ  
էր նոցա, զԱնակոփի՝ 'ի զլուսն Ափ-  
խազեթոյ, և յերկիրն Կլարճէթոյ և 'ի  
Շաւշէթոյ և 'ի Զաւախեթոյ և յԱրտա-  
հանայ՝ յուղժ ամրոցս, և պկարս և ըզ-  
վանանդ, նոյնպէս և զՇամշոյտէ 'ի  
Թուրքաց: Իբրև լուաւ զայս Մէլիք Շահ  
Սուլտանն՝ եկն և անդրէն էառ զՇամ-  
շոյտէ, և զերեաց զՎիրս և զԻւանէ իշ-  
խան, և չոքաւ. Յաւուրսն յայնոսիկ՝  
մինչ և էր Գէորգի 'ի բանակս, եկն առ  
նա Գրիգոր՝ որդին Բակուրանայ, տէրն  
Ախտեաց և Կարուց և Կարնու քաղա-  
քի, և խնդրեաց 'ի նմանէ զկարս, և  
եթող նմա ինեւ զիրսն<sup>3</sup>. Յաւուրսն  
յայնոսիկ ասպառակեցին Թուրք յեր-  
կիրն Վրաց, և բազում արեան հեղին,  
և զյուղժս զերեցին և զնացին. որոց  
գլխաւորին անուն Բուժղուր կոչէին:  
Զի կատարեցաւ բանն Եսայեայ՝ որ վայ

1 Պրոսէ Թարգմանէ Դաւաոր արքային Հայոց՝  
Կիւրիկէի:

2 Յիսկերորդ հինգերորդ արքայ, Բագրա-  
տունի. իշխեաց ամս 17, 'ի 1073 — 1089:

3 Կարծեմ Պրոսէի ոչ քաջիկ 'ի վերայ հա-  
սեալ մտաց վերջն բանեցա՝ Թարգմանէ. Il lui  
remit la direction de ses affaires, այսինքն է,

էրող 'ի նա՝ խնամ ունել զիւրայոցն. մինչդեռ  
Թուրք ինձ եթէ ասեւ կամեցի բողեալ Գեորգեաց  
զկարս քաղաք յինչ Գրիգորի, զստ խնդրոյ նո-  
րա. և կամ եթէ զվերջն բառն զիրան ընծիւն  
նուցուցցի զիւրսն, իմացեալ լինի խնդրեալ Գրի-  
գորի զկարս քաղաք միայն՝ զայս ամենայն տե-  
ղիս իշխանութեան իւրոյ փոխանակաւ Գեորգեայ

տայ ազգի մեղաւորի և լցելոյ մեղօք,  
զի յոտից մինչև ցգլուխ ոչ գոյր 'ի մեզ  
ողջութիւն: Զայս ամենայն կրեալ և  
տեսեալ թագաւորն Գէորգի՝ զի ոչ  
ուստեք գոյր ակնկալութիւն փրկու-  
թեան, եւ զոգի իւր 'ի ձեռին իւրում,  
և չոգաւ առ Սուլտանն Մէլիք Շահ, և  
եզիտ շնորհա առաջի նորա, և պարգևօք  
անդրէն դարձաւ և դաշամբ խաղաղու-  
թեան, միայն զի հնազանդութեամբ

հարկի հոգ տարցի և մի երկիցէ: Սա-  
կայն զի չարութիւնք մեր 'ի մեզ էին,  
'ի Զատկի տօնին ոչ ետ մեզ ցնծալ  
յարութեամբն Գրիստոսի՝ մեղքն մեր  
բազմացեալ: քանզի հայեցաւ Տէր յեր-  
կիր բարկութեամբ, և դողացոյց զսա 'ի  
հիմանց. զի լերինք վիմեղէնք իբրև ըզ-  
փոյի հեղան, քաղաքք և գիւղք և եկե-  
ղեցիք տապալեցան, և դարձաւ տօնն  
մեր 'ի սուգ՝ ըստ գրեցելումն:

Շարունակելի:

տունայ: Իսկ Վախթանգ ասէ. « Տուեալ Գրի-  
գորի առ Թագաւորն ( Գէորգի ) զքաղաքա-  
մուրն Կարս չըջակայովքն հանգեր՝ ողջունեալք

մեկեցան յերերաց. և եթող Թագաւորն 'ի  
Կարս ազնաւորս Շաւշեթոյ և դարձաւ յեր-  
կիր իւր »:

## ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՅ ՈՂԵՐԵՐԳՈՒԹԵԱՆՑ

### ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՀՈՒՓՍԻՄԵԱՅ

( Անիկ թարգմտութիւն. հանեալ 'ի Հասարակաց Գրատունէն վէնեակոյ ):

(Տէս էջ 33):



### ԵՐՐՈՐԴ ԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՀՈՒԹՈՒԾԻ, ԳՅՈՒՆԵ

( Հարսնական զգեստիւք զարդարեալք և առ դրան տաճարի կողոյ ):

Գայիսնէ. Ապա առ հարսանիս զնամք, Հոխիսիմէ.  
Զարդարեալ եմք, և այս տաճար է,  
Ուր պարտիս Անահտայ հանդիսապէս զոհել,  
Հախիսիմէ. Ասա, ուր զԱնահիտ կամիմ խորտակել,  
ԶԱրամազդ, զՓալկոն և զայլ դիւս.  
Այս կերպիւ կամիմ տօնել զհարսանիս,  
Կռապաշտութիւն մեռցի, Ժամանակ է.  
Յոյժ երկար ժամանակ այս երկրի տիրէ.  
Վերջն ունիցի, պարտ է: Թէ Մովսիսի